



ԺԼ ՏԱՐԻ, ԹԻՒ 3

1860

ՄԱՐՏ 1.

Առաջինի ու բաղադրակիրք պատաճի : (Տես երես 33)

### ԺԴ

Մարդս կ'ուզէ միշտ առելի երչանիկ  
ըլլալ :

(Որովհետեւ ինչ որ մենք կ'ընենք ա-  
մէնն ալ աւելի հանգիստ ըլլալու հա-  
մար կ'ընենք : Ի՞նօթի եմ . ասիկայ ան-  
ախորժ զգացմունք մըն է , ու կ'ուտեմ  
որ աղէկ ըլլամ . յոգնած եմ նէ , կը  
հանգչիմ . ձանձրացեր եմ նէ բանի մը  
կը զբաղիմ . վասն զի ասանկ ընելով ա-  
ւելի հանգիստ կ'ըլլամ : Դիտուն ըլլա-  
լը տգետ ըլլալէն աւելի աղէկ է , ուստի  
կը սովորիմ : Ոիրելի ու յարգելի ըլլալը  
անարգեալ ու ատելի ըլլալէն աւելի ա-  
խորժելի է . ուստի առաքինի ու քաղա-  
քակիրթ անձի մը պէս կ'ապրիմ :

Ի՞աբէ կ'ըսենք ան ամէն բանին որ  
մեր վիճակը կը լաւցընեն . և ընդհա-  
կառակն չար ան ամէն բանին որ մեր  
վիճակը կը յոռեցընեն . երջանկութիւն  
կը կոչենք մեծագոյն բարիք ունենալը

և կարելի եղածին չափ նուազ չարը :  
Ի՞այց երկրիս բարիքն ալ չարիքն ալ  
շատ անգամ առերևոյթ են : Օիս ա-  
խորժահամ կերակրէ մը կը զբկեմ առ-  
վեալ մը կշտացընելու համար . ասիկայ  
բարիք մըն է ու խղճմտանքս ինծի կը  
սովորեցընէ՝ զիս ըրածիս վրայ գոհ ընե-  
լով : Իմ ընկերս աղուոր գիրք մը , սի-  
րուն մեքենայ մը ունի ու ես կը յափրշ-  
տակեմ զայն . թէպէտ և ուղածս ձեռք  
ձգելով կարծեմթէ աղէկ բան մը ըրի ,  
բայց քիչ մը վերջը խելքը կը սովորեցը-  
նէ թէ գէշ ըրի . վասն զի ուրիշին բա-  
նը գողցայ , զինքը տհաճեցուցի , և ա-  
նիրաւութիւն մը ընելով գէշ մարդ ե-  
ղայ : Թէ որ ըրած չարութիւնս խոս-  
տովանիմ , հայրս զիս կը պատժէ . թէ  
որ ժխտեմ , բան մը չեմ քաշեր . բայց  
սուտ խօսիլը գէշ է , վասն զի ինչ կ'ըլ-  
լար աշխարհք թէ որ ամէնքը սուտ ը-  
սէին : Ուրեմն ստելով՝ զիս աւելի կը  
գէշցընեմ ու չար չարի վրայ կ'եւել-  
ցընեմ . ուր ընդհակառակն ծշմարիտը  
զուրցելով թէ որ նաև պատիժ ալ ըն-

դունիմ, ասիկայ կը ծառայէ ինծի որ ուրիշ անգամ զգուշանամ անանկ բաներ ընելէն որ չեմ կրնար խոստովանիլ ու այսպէսով աւելի լաւ կրնամըլլալ :

Ուրեմն ասով կ'իմանաս որ ձշմարիտ բարիտ անոնք են միայն որ մարդ բարի ապրելով կրնայ ձեռք ձգել և թէ էրջան էռթիւնը առաքինւոյն վարձքն է :

Ի՞այց ի՞նչ բանի վրայ կը կայանայ առաքինի ըլլալը :

Երտար ու բարեսէր ըլլալուն վրայ :

Ի՞նչ ըսել է արտար ըլլալ .

Բսել է, Չընել ՈՒՐՈՒՇՆԵՐՈՒՆ ԱՆ ԲԱՆՆ ԻՆՉ ՈՐ ԶԵՄ ՈՒԶԵՐ ՈՐ ԻՆԾԻ ԸՆԵՆ :

Ի՞նչ ըսել է բարեսէր ըլլալը .

Բսել է, Բնել ՈՒՐՈՒՇՆԵՐՈՒՆ ԱՆ ԲԱՆՆ, ԻՆՉ ՈՐ Կ'ՈՒԶԵՄ ՈՐ ԻՆԾԻ ԸՆԵՆ :

Ի՞նչ բան է առաջինունիւնը .

Առաքինութիւնը միշտ ուրիշներուն օգտակար բաներ ընելու վարժութիւն մըն է՝ Այսուծոյ կամացը յարմարելու համար :

Ծակ որ ասանկ ընեմի՞նչ բանի կըր նամ յուսալ .

Ո՞իշտ լաւ ու հանգիստ ապրիլ թէ ասդին և թէ անդին :

### ՃԵ

## Մարդս ընկերական է :

Ի՞այց որպէս զի մարդ կարենայ միշտ լաւ ապրիլ և աւելի խօսք ու բան հաս կրցող ըլլալ, հարկաւոր է որ ընկերութեան մէջ ապրի իր նմաններուն հետ :

Ո՞չ, ի՞նչորդ խեղճ ու տկար ենք նոր ծնած ատեննիս : Չենք կրնար ուրքի վրայ կենալ . ալէտք է որ զմեզ մայրերնիս քալցընէ, կերակրէ ու մեր անկողինը պատրաստէ : Տարուան մը ու աւելի կ'ըլլանք ու գրեթէ չենք կրնար ծամել և հազիւ թէ ոտքերնիս կրնանք շարժել . չենք կրնար ոչ բան մը հասկընալ և ոչ ալ մեզի հարկաւոր եղածը յայտնել : Ծակ որ մինակ ըլլայինք, մեզմէ աւելի ուժով հարիւրաւոր կենդա-

նիներ զմեզ ոտնակոխ ընելով կ'ուտէին . թէ որ ծնողքնիս զմեզ չպաշտպանէին, չհագուեցընէին ու չկերցընէին, սովէ, ցրտէ ու նեղութեանէ կը մեռնէինք :

Օ արմանալին, ախախնամութիւն, որ իրարու ձեռնտուութեանը կարօտ ըլլալուու համար մէկզմէկ կը սիրենք : Որովհէտեւ ծնողք կը սիրեն իրենց տղաքը, մտածելով թէ որչափ օգտակար կրնան ըլլալ . իսկ տղան ալ զծնողքը կը սիրէ իրենցմէ ընդունած բարեացը համար . և երբոր աս պիտոյքը կը դադրի, սէրն ու երախտագիտութիւնը անոր տեղը կը բռնէ : Տղուն ուժը կ'աւելնայ ան միջոցին որ ծնողք կը ծերանան, կը տկարանան և կարօտ են որ տղան զիրենք հոգայ ինչպէս որ իրենք զինքը հոգացեր են : Այսպէսով կը ձեւանան ընտանիքներ, ու անոնց ածելովն ալ կը կազմուին ցեղեր, գեղեր, քաղաքներ, տէրութիւններ ու ազգեր :

Ծակ որ մարդս առանձին ապրէր բոլոր օրը ուտելիք փնտուելու և գաղաններէն զինքը պաշտպանելու պիտի զբաղէր . իրեն տկար ըլլալով զօրաւորներէն պիտի յաղթուէր . կենակցութեան, բարիք ուղելուն, ուրիշին օգնելուն, կարեկցութիւն գտնալուն համը պիտի չառնէր . իր ամէն կարօտութիւնը ինքիրմէ պիտի հոգար, անանկ որ իրեն տուն ու զգեստ շինելու համար ամբողջ տարիներ պիտի աշխատեր ու ժամանակ պիտի չաւելնար քնաւ արհեստի մը մէջ յառաջադիմելու և ոչ ուրիշներուն գիտցածը սովորելու . մէկ խօսքովնեղութեամբ, գէշ ու քիչ պիտի ապրէր :

Ի՞այց Այսուած տեսաւ որ մարդուս միայն ըլլալը աղէկ չէր, ուստի տպաւորեց սրտերնուու մէջը աս փափաքն, ընկերական վիճակին հարկը և փոփոխակի մէկմէկու օգնելու ձիգը : Վեզի տղայութեանդ միջոց, ովլ պատանեակ, ի՞նչ պատիժ ամենէն աւելի ծանր կու գար . արդեօք ընկերներէդ բաժնուելով մինակ մնալը չէր մի . միտքդ պահէ ասիկայ ու երբ մարդկանց մէջ եղած միջոցդնեղութեան ու մաղձոտութեան

վայրկեաններ ունենաս , ու քեզի անա-  
խորժ ու գէշ երենայ ընկերութիւնը ,  
մտածէ թէ ի՞նչ կ'ըլլայիր եթէ ընկե-  
րութենէ զուրկ մնայիր :

## ԺԶ

### Մարդիկ հաւասար են :

Ո՞վ թագաւորդ աշխարհի , ո՞վ գիւ-  
ղականդ , ո՞վ որ տարին հարիւր հազար  
ո՞րեր . լեռայով ալ չես կրնար ձանձրու-  
թեան ձեռքէն խալըսիլ , և դուն որ օրն  
՚ի բուն աշխատելով հազիւ կրնաս քիչ  
մը հաց ձեռք ձգել , դուք պատասխան  
տուեք ինձի , Ո՞վ է ըրեր զձեզ :

(Օ ամէնն ալ Ի՞ստուած . ամէնքն ալ  
նոյնակէս բաղկացեալ են անմահ հոգիէ  
ու նիւթական մարմնէ մը , և հաւասա-  
րապէս ամէնքն ալ երջանկութեան կը  
փափաքին : Կը տեսնանս սա գերեզման-  
նոցը . ի՞նչ տարբերութիւն կայ հոն  
տիրոջ ու ծառային մէջ , մեծ կալուա-  
ծատէրին ու խեղճ աղքատին մէջ : Ի-  
րեք թիզ փոս մը բաւական է հաւասա-  
րապէս ամենուն դիակին համար , և  
հոգինին Ի՞ստուծոյ առջևն է՝ միայն ի-  
րենց գործքերովը :

Ո՞եոք , վիճակը , դաստիարակութիւ-  
նը , կորովութիւնը զմարդիկ կը զանա-  
զանեն , այլ այս զանազանութիւնները  
վիճակի են միայն և ոչ բնութեան .  
խանձարրոց մէջ եղող տղան և հասու-  
նացեալ մարդ մը նոյն իրաւունքն ունին  
ապրելու . բայց առաջինին քիչ մը կաթ-  
բաւական է , իսկ երկրորդին ուրիշ շատ  
բաներ ալ պէտք կ'ըլլան . առաջինը ան-  
կարող է ինքնիրեն գտնելու իր ուտելի-  
քը , և ուրիշներէն պէտք է որ սպասէ ,  
ուր երկրորդը ինքնիրեն կը ճարէ :

Եւ ոչ իսկ հարստութեան ու կարո-  
ղութեան զանազանութիւնը տարբե-  
րութիւն մը կը պատճառէ բնութեան .  
այլ մանաւանդ թէ ամենուն հաւասար  
ըլլալէն առաջ կու գայ : Ո՞արկոս , կի-  
րակոս , իժորոսը վաճառականութեան  
համար ստակ դրին , առաջինը դրաւ  
հազար դահեկան , երկրորդը հինգ հա-

րիւր , երրորդը երկու հարիւր . երբոր  
հաշիւնին կը տեսնան , իրաւացի է որ  
Ո՞արկոսը կիրակոսին կրկինը առնէ ,  
վասն զի աւելի մեծ դրամագլուխ դրաւ .  
թէ որ ամենուն ալ նոյնչափ տրուեր՝  
Ո՞արկոսը իրաւունք ունէր գանգտելու :  
Ո՞յսպէս ալ ընկերութեան մէջ ով որ  
շատ կ'աշխատի , ով որ աւելի բարի է ,  
ով աւելի արդիւնք ունի , իրաւունք ու-  
նի մեծամեծ դիւրութիւններ ալ վայե-  
լելու , և ուրիշներուն ալ աւելի սիրելի  
ու մեծարոյ ըլլալու , որոնք ստոյգ բա-  
րիքներ են :

Ի՞ս ըսելով , չենք հասկընար որ ամէն  
մարդիկ նոյն սկիզբն և նոյն վախճանը  
չունենան , և կամ թէ ամէնքն ալ՝ որ  
ըստ ինքեան այլ և այլ ճամբով առաջ  
կ'երթան , մի և նոյն տեղը չեն ելլար .  
աս պատճառաւս ամէնքն ալ մի և նոյն  
պիտոյքներն ունին , և ասոր համար  
պարտական են և իրենց իրենց պիտոյքը  
լեցընել :

## ԺԷ

### Իրաւունք և պարտք :

Պարտական էն և իրենան բուն ասանց  
վրայ կեցած են մարդուս պարտքերն և  
իրաւունքները : Ի՞մէն մարդ ստեղծուած  
է Ի՞ստուծմէ միշտ լաւ ապրելու հա-  
մար . ընկերութեամբ կ'ապրինք զմեզ  
պահպանելու , մեր վիճակը լաւցընելու  
ու կատարելագործուելու համար . ու-  
րեմն ամէնքն ալ իրաւունք ունին ան-  
ամէն միջոյներուն ձեռք զարնել որ  
իրենց բարեպէս ապրելուն համար հար-  
կաւոր են : Ինկերութիւնն ամենուն  
բարւոյն համար եղած է և ամէն մէկուն  
բարին հասարակաց բարին ըսելէ . ու-  
րեմն իւրաքանչիւրին պարտքն է իր բա-  
րւոյն ետևէ ըլլալ , այսինքն ըստ վախ-  
ճանին գործածել իրեն ունեցած իրա-  
ւունքները : Ի՞մէն մարդ հաւասար է ,  
ուրեմն ամէն մարդ ալ նոյն իրաւունքն  
ունի . և հետևաբար ամեննուս ալ  
պարտքն է ուրիշն իրաւունքը մեծա-  
րել . թէ որ կ'ուզենք որ ուրիշներն ալ

մեր իրաւունքները մեծարեն : Դանած գիրքդ կամ մէկէն ընծայ առածդդ քու իրաւունքդ է . ուրեմն ես ալ պարտաւկան եմ զանիկայ քեզմէ չյափշտակել : Ուստի այսպէսով ամէն մէկ իրաւունքի հակառակ պարտք մը՝ ի մեզ՝ այսինքն մեր իրաւունքը ինչ վախճանաւ որ տրուած է , նոյն վախճանին համեմատ բանեցնելու . և պարտք յայլ՝ ուրիշն իրաւունքը մեծարելու :

Հիմա քննենք թէ ինչ կերպով մենք պէտք է գործածենք աս իրաւունքներն ու պարտքերը :

## ԺԷ

Իրաւունք և պարտք պահպանութեան :

Կիրակի օրը ներկայ գտնուեցայ ժողովրդապետի մը քրիստոնէական վարդապետութիւն բացատրելուն ժամանակը որ ասանկ կ'ըսէր .

“ Ո՞ի սպանաներ „ . Կստուած մեզի ասանկ հրամայեց . բայց դուք երբոր խղձերնիդ կը քննէք իմանալու համար թէ արդեօք Կստուծոյ կամքը կատարեր էք թէ չէ , մտքերնիդ կը դնէք թէ աս պատուիրանքիս մէջ զանցառութիւն մը ըրած չէք , որովհետև բնաւ մէկը չէք սպաննած և ոչ ալ մէկուն մահուանը փափաքեր էք . բայց ասիկայ արդեօք միայն բաւական է . Կստուած ձեզի իրեւ պարգե մը տուած է կեանքերնիդ , պարգե մը առանց որոյ չէք կրնար ոչ աս աշխարհքիս բարիքը վայելել և ոչ ալ յաւիտենական բարեաց արժանի ըլլալ . ուրեմն իրաւունք կեանքերնիդ պահէլու և պարտըկան էք յարգելու զայն՝ ի ձեզ և յայլ : Ուրեմն ամէնքը կրնան ու պարտըկան ալ են իրենց կերակուր , զգեստ ու բնակարան հայթայթելու , իրենց ուժն և անդամները պահպանելու , և կարելի եղածին չափ անանկ բանեցնելու որ իր բարւոյն պատշաճ ըլլայ :

“ Չեր և ուրիշներուն կեանքին կը

վնասէք ոչ թէ միայն զուրիշը դանակով վիրաւորելով , այլ նաև կոկու ընելով , զարնելով , բռնադատելով որ ծանր աշխատութիւններ յանձն առնուն : Եթենաց պահպանութեան պարտքն ոտքի տակ կ'առնու այն սուտ բժիշկը որ սիսալ դեղեր կուտայ . ինչպէս նաև անիկայ որ հոտած կամ աւրուած կերակուրներ , քացխած գինիններ ու տհաս պտուղներ կը ծախէ . դարձեալ ով որ փոխադրական հիւանդութեանց չտարածուելուն համար կարեւոր զգուշութիւններ ըներ , ինչպէս օրինակի համար ըսենք բորոտութեան , ծաղկի , մաղձախտի և այլն : ‘ Դուք ալ , ով մարք , աս պատուիրանիս դէմ կ'ընէք , երբոր ըստ ձեր պարտուցը ուշադրութիւն չէք դներ որ տղաքնիդ կրակի կամ ջրերու քով յաձախնելով չվտանգուին . չէք պատուաստեր զիրենք , երկար ժամանակ իրենք զիրենք իրենց գլխուն կը թողուք ու չէք մտածեր որ անկից թնչ գէշ բաներ կը հետեւին . չէք արգիլէր որ կառքերու ետևներէն չվազեն , զէնք չգործածեն , ծառերու վրայ չելլան ու սանդուխներէ վար չվազեն : Եթէ ստիպես մէկը որ շատ գինի խմէ՝ անոր ըրած գէշութեանց յանցանքը քուկդ է . եթէ ստիպես կին մը որ իրեն կարողութենէն աւելի աշխատի , իրեն և նաև տղուն մահուանը պատճառ դուն կ'ըլլաս : Տիաձութիւններն ալ կրնան զմարդ հիւանդացնել ու մեոցընել . թէ որ գէշ վարք անյնես՝ անով հօրդ կեանքը կը կարձեցնես . եթէ բռնութիւն ու խստութիւն բանեցնես ընկերոջդ դէմ , զինքը կը տրտմեցնես ու հոգւոյն և թերեւս առողջութեանն ալ կը վնասես , որով մեծապէս կը մեղանչես :

“ Կրանց առողջութեան ստակ մը չեն արժեր զուարձութիւնները : Ո՞էկն որ առողջ է , այնպիսին նաև հարուստ է իրեն կարծածէն աւելի : Հիւանդութիւնները ժամանակի ու ստկի կորուստ են ու զուարձութեանց արգելք կ'ըլլան : Կայեցէք ուրեմն ամենայն կերպով որ առողջութիւննիդ չկորսնցընէք , որուն մի միայն հնարքն է բարեխառնութիւ-

նը : “ Կուք ձեզմէ պէտք չէ վտանգներու մէջ ձգէք զձեղ . բայց երբոր դիմացնիդ վտանգ մը ելլայ՝ քաջասիրտ պէտք է ըլլաք : Ա, եղութիւններէ խալսելու միակ միջոցը քաջասրտութիւնն է : ” Աւակոծութեան մէջ վախկոտը կը խղդուի , իսկ քաջասիրտը տախտակի մը ապաւի նելով կը խալսի : Աթէ իժը կամ կատղած շունը վախկոտ մը խածնելու ըլլան , ողորմելին յուսահատաբար լալսվու ողբալով կը մեռնի . բայց քաջասիրտը կը թողու որ խածուած տեղը հրացեալ երկաթով տաղեն ու այնպէսով կ'առողջանայ :

“ Ոչ երբէք կրնայ մէկն անհոգ ըլլալ ու փոյթ ըընել իր կենացն ու առողջութեանը վրայ , եթէ ոչ զօրաւորագոյն պարտք մը կամ հասարակաց բարին նոյնը չպահանջէ իրմէ , կամ թէ որպէս զի պատույն և պարտուցը դէմ չգործէ : ( Օրհնեալ ըլլայ այն մարդն որ տղայ մը խղդուելու վտանգէն խալսելու համար , ջրին մէջ կը նետուի ու իրեն կեան քը անստոյգ վտանգի մը մէջ կը դնէ , որպէս զի տղան յայտնի մահուրնէ խալսէ : Իմիշկներն ու քահանաները հիւանդաց քովը կ'երթան , թէպէտ և վտանգ ըլլայ որ իրենք ալ նոյն ախտէն բռնուին , որպէս զի մարմինն առողջացընեն ու հոգւոյն բարիք մը ընեն : Արբոր թշնամիները ձեր հայրենիքն ընկծել կը սպառնան՝ ուրիշներուն հետ դուք ալ կը զինուորիք , ու հասարակաց հանգըստութիւնն ապահովելու համար , դուք զձեղ վտանգի մէջ կը դնէք . սուրբերն ալ , որոնք որ մենք հիմա կը յարգենք , աւելի յանձն առին մարտիրոս ըլլալ քան թէ հաւատքնին ուրանալ :

“ Ոյէ որ հիւանդութեամբ անկողին իյնաք , ձեր պարտքն է ամէն հնարք բանեցնել , թէպէտ և անախորժ ըլլան , որպէս զի նորէն վրայ դնէք առողջանաք : Իմշկին ըսածներուն սիրով մտիկ ըրեք . քաշած ցաւերնուդ ու ձեր վրայ եղած դարմաններուն սիրով համբերեցէք , ու ձեր վրայ աշխատողները մի ձանձրացնէք . նեղութիւնը մի արհամարհէք , ու նայեցէք միանգամայն որ

անով ոգեսպառ ըրլաք : Իսկ թէ որ մահը կը մօտիկնայ , հանդարտ սրտով իրեն գալուն սպասեցէք : ( Օր մը , ինչպէս որ իմպարտքս է , հիւանդի մը քով գացեր էի ու հարցուցի իրեն թէ մեռնելուդ վրայ կը ցաւիս . նայեցէք ինչպատասխան տոււաւ ինծի . Ո՞հ , հայր , ըսաւ , ի՞նչո՞ւ համար պիտի ցաւիմ . ի՞նչ , մինէ մեռնէլու մէղէ է մի . և աղէէ գիտէի որ մեռնէլու համար ծնած էմ . և մինէ ինձմէ առաջ եղաղ մարդէկը բոլորն ալ չմեռան : ” Բանի որ ժամանակ ունէի մեռնէլու հասձելով բարի գործէր ընել էլ ջանայի ու էլ նայէի որ անանէ ըլլամ ինչպէս որ աս էլտիս է՞ուշէի ըլլաւ : Այս հիմա վախով բայց նաև կսպահութեամբ է՛լլամ Աստուծոյ առջև , վասն զի ի՞նչը բարի է :

“ Բայց ձեր մարմնոյն առողջութենէն աւելի պէտք է , սիրելի որդիքս , որ ձեր հոգւոյն առողջութիւնն հոգաք . ուրեմն ձեզմէ հեռու ըլլան չափազանց հաճոյքներն ու ցաւերը : ( Օյէ որ Աստուած ձեզի յանդութիւն տայ , ամենսեին մի հպարտանաք . և եթէ ուզէ նեղութիւներով փորձել զձեղ , զգուշութեամբ ու խոհեմութեամբ զձեղ անոնց պատրաստեցէք . Երբ ձեր վրայ նեղութիւնները կը զօրանան , արիութեամբ կրեցէք ու անոնց հետևանքներուն համբերութեամբ տարիք :

“ Բայց որովհէտեւ ամէն բարիք Աստուծմէ կուզան , աղաչեցէք որ ձեզի առողջ մարմնոյ հետ տայ նաև առողջ միտք մըն ալ , ” :

Ասմանկ կը քարոզէր այն ժողովրդապետը անցեալ կիրակի :

Իր շարունակուի :

